մէջ. եւ այդ տարբեր կառուցման հետեւանքով մենք ստանում ենք տարբեր արդիւնք. մի տեղ -էի, մի տեղ՝ -այի. երկուսի մէջ էլ մնում է նոյն բաղադրիչը -այ, որ ձուլուելով բունի ի-ին՝ տալիս է իայ, իսկ սա եյ, որից՝ է. իսկ երկրորդ ձեւի բունը ի չունենալով, մնում է այ — տեսն — այի: Պարզ է, որ է-ն ծագում է ի-այ խմբից: Բունի նոյն կազմութիւնը նկատելի է եւ սոռր. ներկայ ժամանակի վրայ.

տեսան-ի-ամ > տեսնի-ամ > տեսնեմ.
տեսան -ամ > տեսնամ:

Այս լուծումների հիման վրայ կարող ենք ասել, որ մեր է-ն պէտք է վերականգնուի իբր ի-այ:

Բայց հիմայ քննենք մի ուրիշ է ունեցող ձեւ. բացառական հոլովի է-ն. օրինակ՝ ի սրտէ: Հիմնուելով «սիրտ» եւ «սրտի» ձեւերի վրայ, ես վերականգնում եմ մեր բառի նախաւոր ձեւն իբր *սիրտի, որ միաժամանակ ե՛ւ ուղղական էր ե՛ւ սեռական, նայելով շեշտին. — ուղղ. սի՛րտի > սի՛րտ (ի — չքացած). սեռ. սիրտի՛ > սըրտի՛ > սրտի՛ (ի — սղած): Գրաբար լեզուն պահած է, կարծում եմ, հնագոյն սեռական-բացառականի վերջաւորութիւնները բայց միմիայն յատուկ անունների համար յ-Արամ-այ, ի Հայկ-այ: Հաւատարիմ այս նախագրական աւանդութեան՝ Արցախեցին իր մթին եւ անկոխ ձորերում դեռ ասում է. ընձան-այ, քզան-այ, մզան-այ, այսինքն ինձանից, քեզանից, մեզանից: Ահաւասիկ այս ածանցն է, որ միանալով բառի հին ուղղական ձեւին՝ տալիս է բացառականի է-ն. այսպէս՝ սիրտի + այ > սրտեյ > սրտէ. բանի-այ > բանեյ > բանէ: Ուրեմն նաեւ ա՛յստեղ մեր է-ն մի նախաւոր ի-այ է: Այս հիման վրայ է, որ իրեայ (հրի՛այ) սեռակ. տալիս է իրէի. եւ ընդհակառակն Հոփիմէ (իայ), սեռ. տալիս է Հոփիմեայ (իայ). այսինքն սեռ. եւ ուղղակ. միեւնոյն ձեւերն են:

Գրաբարն ունի սմանէ, դմանէ, նմանէ, որ պէտք է վերականգնել իբր *սմանայ, *դմանայ, *նմանայ. այս շարքին զուգահեռ է Արցախեցու սրանայ, դրանայ, նրանայ, որ ինչպէս տեսնում էք աւելի հին կերպարանք ունին քան գրաբար ձեւերը. սրանց այ խմբերը դեռ չեն ամփոփուած:

Մենք հիմա վերջնապէս կարող ենք ասել, որ մեր է-ն ձոյլ ձայնաւոր է. որ մեր հնագոյն լեզուն Է ունեցած չէ. որ մեր բոլոր է-երը կամ այ են կամ ի-այ, հետեւաբար սրանց կերպարանքով պիտի վերականգնուին: Գրերի գիւտի ժամանակ մենք ունեցած ենք է ձայնը, որ տարբեր արժէք է ունեցած քան ե-ը, ուստի եւ յատուկ գիր է հնարուած նրա համար. բայց ինչպէս նախագրական հայերէնը ե չի ունեցած, այնպէս չի ունեցած նաեւ է: Այդպէս է սանսկրիտը. նա կարճ e չունի. իսկ իր ունեցած երկար ē-ն մի նախաւոր ai է: Երբ սանսկրիտը գրի առնուեց՝ է ձայնը արդէն գոյութիւն ունէր, ուստի եւ յատուկ գիր է հնարուած նրա համար: Բայց այդ ձայնը արտաբերական հոլովոյթի արդիւնք է. նախապէս նա գոյութիւն ունեցած չէ. նա մի ձոյլ ai է, ինչպէս մեր է-ն, որ մի այ էր երբեմն կամ ի-այ:

—

Մենք կարող ենք հիմա մեր ե-ի տեսութեան մի նոր ապացոյց տալ, միաժամանակ մեկնելով մի փոխանցում. — է/ի, — սէր — սիրոյ: — Լեզուագէտները վկայում են փոխանցման փաստը առանց մեկնութեան:

Հարցում. — ի՞նչ է ե-ը. նա մի պարզ հնչի՞ւն է, թէ իա խմբի ձուլում: Եւ ի՞նչ է է-ն, նա մի եյ է թէ մի ի-այ: Ես ասում եմ. միմիայն այն դէպքում երբ ընդունենք թէ ե-ը մի ձոյլ իա է, իսկ է-ն մի ամփոփ ի-այ՝ մենք կարող ենք բանաւոր մեկնութիւն տալ է/ի փոխանցումին:

Այսպէս, օրինակ, առնենք տէր բառը, որ ունի տիրոջ ձեւով սեռական: Կարծում եմ, որ նա ունեցած է եւ տիրոյ ձեւով սեռական, որ կենդանի է բարբառների մէջ տիրու ձեւով: Գիւղացին հայհոյելիս ասում է. «քու տիրու...». հմմ. որդոյ — որդու [5]: Տէր բառը համարւում է մի նախաւոր տի-այր ձեւի ամփոփում: Այս լուծումն ընդունում է նաեւ Մէյէն (Esquisse, էջ 24): Այս լուծումն ինքնին եւ Մէյէի այն տեսութիւնը թէ մեր է-ն մի նախաւոր եյ է, արդէն ցոյց են տալիս, թէ մեր ե-ը մի նախաւոր իա է. տի-այր > տեյր (իա > ե) > տէր: Տիրոջ ձեւի մէջ տիր — բունը ծագում է տէր ձեւից, իսկ սա տեսանք, որ մի վաղեմի տի-այր է: Մենք կարող ենք ուրեմն սեռական ձեւերը վերականգնել իբր տի-այր-ոջ, տի-այր-ոյ(ու):

Ե-ին վերաբերեալ մեր գրութեան մէջ (Հանդ. Ամս. 1930, 5—6) մենք տուինք ձայնակազմութեան եւ փոխանցումների մի քանի տարազներ, որոնցից մէկ էր. ía > ı̇y > ı̇: Արդ՝ տիայր ձեւի մէջ իա խումբը կարող էր շեշտուիլ իբր ի'ա (ía): Այս շեշտառութեան հետեւանքով նա պիտի դառնար ի'՛յ (ı̇y): Սրա յ-ն ձուլուելով հետեւորդ յ-ի հետ, պիտի տար մի յ, իսկ սրան պիտի կլանէր նոյներանգ եւ շեշտուած ի'-ն եւ երկար էր: Այդ ստացական երկարութիւնը պիտի կորչէր ժամանակին եւ մնար մի կարճ եւ շեշտուած ի: Ահաւասիկ այս փոխանցումների ծիրը. տի'-այր > տի'՛յյր > տի'՛յր > տի'ր: Արեւելահայն արտաբերում է տի'րոջ, տի'րու. եւ ա՛յդ է բառերի պատմական շեշտը, որ բանաւոր մեկնութիւն է տալիս Է/Ի փոխանցումին: Այս փոխանցման մէջ վճռական դեր խաղացողը Ե-ի բաղադրիչ ի-ն է եւ նրա շեշտն է, որ ստիպում է հետեւորդ ա-ին սղիլ. այնուհետեւ ազդում է նոյներանգ եւ մերձերանգ ձայնաւորների սղման օրէնքը. ի'ա > ի'յ. — ի'յ + յ > ի'յ > ի': Ւ-ն, երբ պարզ է, ոչ մէկ տարր ունի, որ փոխանցումով ի դառնալ կարենայ. բայց է-ն, երբ ձոյլ ի-այ, այդ տարրն ունի իր մէջ. դա նրա ի-ն է, որ շեշտի ազդեցութեան տակ մնում է անվթար, զոհելով հետեւորդ ա-ն ու յ-ն. ի'-այ > ի'յ > ի': Այստեղից հետեւում է, որ բոլոր է/ի փոխանցում ունեցող բառերի ու ձեւերի է-ն պէտք է վերականգնել իբր եյ, այսինքն իբր ի-այ:

Եզրափակենք.

1. Նախագրական վաղեմի հայերէնն ունեցած է կարճ ու երկար ա-եր, որ տարբեր լեզուական միջավայրերի մէջ արտաբերուած են մեծաբաց, միջակ եւ չեղ արտասանութեամբ:

2. Նախագրական հայերէնը Է չի ունեցած. է-ն մի ձոյլ ձայն է. նա կամ մի այ է, որի ա-ը հնչուած է չեղ կամ մի հին ի-այ է:

3. Դասական շրջանի կարճ ա-երը կարող են ծագած լինել երկար ա-երից, իսկ սրանք իրենց հերթին ծագած լինել ա + բ + ա խմբերից:

Այստեղից հետեւում են մեթոդական ցուցումներ: Է ունեցող բոլոր բառերն ու ձեւերը պէտք է վերականգնուին իբր այ կամ ի-այ ունեցող բառ ու ձեւ: Պէտք է յատուկ քննութեան առնել այդ խումբերի յ-երը եւ տեսնել թէ ի՞նչ բաղաձայն են փոխարինում: Վերականգնուած ձեւերը միայն պէտք է համեմատութեան դրուին օտար կշիռների հետ, նախապէս նոյն աշխատանքը կատարելով եւ նրանց վրայ: Այնուհետեւ դիւրին է գծել հնչական եւ իմաստական հոլովոյթի ծիրը:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆՈՐ ԱՄԲԻՈՆ-ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Եւրոպայի նշանաւոր մայրաքաղաքներից մէկում, հանգստաւէտ, գեղեցիկ Բրիւքսէլում, բացւում է համալսարանական մի նոր ամբիոն Հայագիտութեան: Բայց նախ երկու խօսք բուն համալսարանի մասին, որ իր ծագումով ու վիճակով մեծապէս տարբերւում է սովորական պետական համալսարաններից:

Բրիւքսէլի այս բարձրագոյն կրթական հաստատութիւնը կոչւում է «Ազատ Համալսարան» (Université libre), որովհետեւ հիմնուած է ոչ թէ պետական միջոցներով եւ պետութեան հսկողութեան տակ, այլ մասնաւոր, ուսումնասէր մի անհատի նախաձեռնութեամբ եւ երկար ժամանակ պահպանուել է Բրիւքսէլ քաղաքի եւ քաղաքացիների ընձեռած միջոցներով: Վերջերս միայն Բելգիական կառավարութիւնը պետական բիւջէից յատկացրած է տարեկան 10 միլիոն ֆրանք նրա պահպանութեանը եւ համալսարանն ընդունած է պաշտօնական ուսման ծրագիրը: Միայն թէ նա դեռեւս «ազատ» է, որովհետեւ ուսուցչապետները շարունակում են ընտրուիլ ոչ թէ Կրթական մինիստրութեան՝ այլ Համալսարանի խորհրդի կողմից: Բրիւքսէլում ուրիշ համալսարան չկայ:

Մօտ 100 տարի է անցել այն օրից երբ մի զարգացած եւ ազատամիտ Բելգիացի՝ Վէրհագէն (Verhaegen), որի արձանը կանգնուած է համալսարանի շէնքի առջեւ, դրել է այս բարձրագոյն դպրոցի հիմքը: Առաջին տարիներն իսկ կազմակերպուել են աւանդական 4 ճիւղերը: 1. Փիլիսոփայութեան եւ Գրականութեան (Faculté de Philosophie et de Lettres), 2. Իրաւագիտութեան (Droit), 3. Գիտութեանց (Sciences) եւ 4. Բժշկական (Médecine): Բաւական ուշ, հիմնուել է նրա հինգերորդ ճիւղը՝ Բազմարուեստից Դպրոցը (Ecole Polytechnique) կամ Faculté des Sciences appliquées, որ նշանաւոր ճարտարագէտներ (ingénieur) է տուել Բելգիային: Հետզհետէ՝ տարիների ընթացքում աւելացել են համալսարանի նոր բաժանմունքները՝ Institut de Botanique (Բուսաբանութեան), Institut de Physiologie (Բնախօսութեան) եւ Institut d'Hygiène, de Bactéréologie et de Thérapeutique (Առողջապահութեան, Մանրէաբանութեան եւ Ախտաբուժութեան): Այնուհետեւ՝ Քաղաքական Ընկերական Գիտութեանց Դպրոցն (Ecole des Sciences politiques et Sociales), որ 1902ին վերածուել է Institut de Sociologieի եւ վերջապէս 1904ի, աւելացել է Առեւտրականը (Ecole de Commerce):

Ազատ համալսարանի ուսանողների թիւն այսօր 2300ից անցնում է, որոնց մէջ կան

[5] Ժողովրդական երգն ասում է.

Արի սիրուն, գնա սիրուն,
Հազար երանի քու տիրուն:

© National Library of Armenia

օտարները զանազան երկիրներից, ի մէջ այլոց նաեւ հայեր:

Երբ 1914ին Բելգիայի չէզոքութիւնը ոտքի տակ տալով անողորմ թշնամին երկիրը պատերազմական գաշտի վերածեց, Բրիւքսէլի համալսարանն էլ ստիպուած էր իր դռները փակել, որոնք վերստին բացուեցան Դաշնակիցների հետ միասին մեծ Յաղթութիւնից յետոյ: Նրա նիւթական միջոցները բոլորովին սպառուած էին եւ ահա մի նոր եւ առատաբուղխ աղբիւր նորից կենդանութիւն տուեց, նոր ոգի ներշնչեց նրան:

Պատերազմի ընթացքում Բելգիական ժողովուրդը սուվի ճիրաններից պահպանելու համար ամերիկացիք հիմնել էին մի նպատատոյց Յանձնաժողով՝ Commission for Relief in Belgium, որի գլխաւոր գործակատարը էր Միացեալ Նահանգների նորկայ նախագահը Հերբերտ Հուվէր: Պատերազմը վերջանալուց յետոյ այս Յանձնաժողովը չարունակեց իր գործունէութիւնը բայց տարբեր եւ նոյնպէս արդիւնաշատ յատկապէս կրթական մեծ ծրագրով: Նրանից ծագեցին երկու մեծ բարեգործական հաստատութիւն, որոնց մէկը կոչուեց «Համալսարանական հաստատութիւն» (Fondation Universitaire), իսկ միւսը «Բելգիական Նպաստամատոյց Յանձնաժողովի կրթական Հաստատութիւն» (C. R. B. Educational Foundation): Դրանցից օգտուողը գլխաւորապէս Բրիւքսէլի համալսարանն եղաւ: Առաջին հաստատութիւնը նուէր ստացաւ 1922ին Ամերիկայից ոչ պակաս քան 15 միլիոն դոլար, որի վրայ աւելացան Բելգիական նուէրները դրամով եւ հողով եւ ահա հին չինութեան տեղ, Բրիւքսէլի ամենաօդասուն վայրի վրայ, սկսան բարձրանալ հոյակապ ընդարձակ չէնքեր, որոնք կազմեցին համալսարանական մի ամբողջ քաղաք — Cité Universitaire, որի փողոցին էլ ըստ պատշամի՝ Avenue des Nations անունը տրուեց: Եւ 1930 Յունիս 25ին «Ազգաց Համալսարանը» կատարեց իր պաշտօնական հանդիսաւոր բացումը նորակառոյց չինութիւնների մէջ, ներկայութեամբ ընդհանուրից սիրուած ու յարգուած Բելգիական ազգային–արքայ (le roi chevalier) Ալբերտ Ա.–ի:

Այժմ դանք մեր ամբոնին:

Այս 1930 տարին Բելգիայի քաղաքական անկախութեան (Հոլլանդիայից բաժանման) հարիւրամեակն էր եւ ամբողջ երկիրը մեծ հանդիսաներով տօնեց այդ մեծ դէպքը: Մի հայրենասէր եւ ուսումնասէր Բելգիացի, Անվերսցի մի հարուստ նաւատէր՝ Բօրերտ Վէռներ (Robert Werner) ուզեց չօշափելի կերպով յաւերժացնել այդ տօնը եւ մի նոր նուիրատուութիւն արաւ ի նպաստ Բրիւքսէլի համալսարանի: Նա կամեցաւ, որ այս «Ազգաց Համալսարանը» ունենայ նաեւ իր «Արեւելագիտութեան ճիւղը» (Institut Oriental) եւ այդ նպատակի համար յատկացրեց տարեկան 175·000 ֆրանքի մի գումար: Այս նոր ճիւղը պիտի կցուէր Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղին եւ պիտի բովանդակէր Մերձաւոր Արեւելքի եւ Եգիպտական հնութեանց վերաբերեալ գուտ գիտական ուսումնասիրութիւնները, առանց որեւէ նիւթական օգուտի ակնկալութեան: Նուիրատուն չէր տուում էր, որ այդ նպատակով հաստատուելիք ամբոնները պէտք է իրենց գոյութիւնը պահպանէին, եթէ նոյն իսկ չաճախող ունկընդիրներ չունենային:

Այդ ժամանակ՝ այս բարեպատեհ առթից օգտուեց Փիլիսոփայութեան եւ Գրականութեան Ճիւղի աւագը (Doyen) Պրոֆ. Հաւրի Գրէգուար (professeur Henri Grégoire) եւ համոզեց պ. Վէռներին որ իր նուիրատուութեան մէջ հաստատուն կերպով տեղ յատկացնէ Հայագիտութիւն (Arménologie) եւ բարերարը հաճութեամբ ընդունելով առանձնապէս չհետեց այդ՝ իր գլխաւոր նուիրաբերութեան մէջ: Պրոֆ. Գրէգուար՝ եւրոպական հռչակ վայելով Բիւզանդագէտ է եւ մինչեւ ցարդ էլ շատ պարապանքով արդէն ցոյց էր տուած իր հայասիրութիւնը: Բայց իրրեւ գիտնական էլ համոզուած է, որ Բիւզանդական պատմութիւնը ճշդօրէն եւ լիապէս պարզելու եւ աւանդելու համար անհրաժեշտ է ծանօթանալ մերձակայ երկիրների պատմութեան եւ ուսումնասիրել նրանց լեզուները, եւ թէ հետեւաբար բիւզանդագէտները սերտ աշխատակցութիւն պէտք է ունենան միւս արեւելագէտների՝ ասորագէտների, արաբագէտների եւ հայագէտների հետ: Նա մանաւանդ է բոլոր արեւելագէտների համագումարներին, ինչպէս այս (1930) տարի Վիեննայում եւ Ամստերդամ կայացածներին: Նա յաճախ հրաւիրում է դասախօսութիւններ կարդալ միջազգային բարձրագոյն գիտական շրջաններում եւ նոյնիսկ Ֆրանսական կառավարութիւնն էլ Légion d'honneurի պատուանշանը շնորհեց նրան: Նա հրատարակում է Բրիւքսէլում՝ բիւզանդական ուսման նուիրուած Bizantion ծանօթ գիտական հանդէսը:

Բրիւքսէլի համալսարանում վերջին տարիները բացուած էին լեհական եւ ռուսական ամբոնները՝ շնորհիւ լեհական կառավարութեան նպաստին եւ մանաւանդ նուիրատուութիւնների: Այժմ պիտի ունենանք նաեւ հայերէնի ամբիոն: Այս մասին հարկ եղած բոլոր ձեւակերպութիւնները արդէն կատարուած են: Վէռներեան Հաստատութեան (Fondation Werner) Յանձնաժողովի որոշումից յետոյ (որի անդամներից մէկն է պ. Գրէգուար) Համալսարանի Խորհուրդն էլ իր Նոյեմբեր 29ի նիստում ընդունեց Վէռների նուիրատուութեան պայմանները, որով եւ հաստատեց հայկական ամբիոնը: Միեւնոյն ժամանակ իրրեւ երախտագիտական ցոյց՝ նուիրատու Վէռները ընտրուեց Համալսարանի Խորհրդի անդամ: «Արեւելագիտական ճիւղի» ամբիոնների համար ուսուցչական ներկի անուանումն եւ հրաւիրումը յանձնուած է «Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղին», որի աւագն է, ինչպէս ասի, նոյն Պրոֆ. Գրէգուար: Արդէն համաձայնութիւն է կայացած այս մասին եւ հայերէնի ամբիոնի համար հրաւիրուած է այդ պաշտօնին կատարելապէս համապատասխան մի անձ, որ է Պրոֆ. Նիկողայոս Ադոնց, որ մինչեւ վերջին տարիները նոյն պաշտօնը վարում էր Պետրոգրադի ուսական համալսարանում: Նրա առանձին դրքով հրատարակուած երկերի մէջ ընդհանուր ուշադրութիւն է գրաւած Арменія въ Эпоху Юстиніана (Հայաստանը Յուստինիանոս կայսեր ժամանակ) հեղինակաւոր գործը: Նա ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ Բիւզանդագիտական եւ հայագիտական վերաբերեալ, որոնք հրատարակուած են ուսական, հայկական եւ եւրոպական դասագան ամսագրերում:

Պ. Գրէգուար այժմ ձեռնարկել է մի մեծ գիտական աշխատութեան, Corpus Bruxellense վերնագրի տակ բիւզանդական պատմագիրների հատաքածոյի հրատարակութեան, որին հրաւիրուած է աշակցել նաեւ Պրոֆ. Ադոնց:

Հայկական ամբիոնի բացումը պիտի կատարուի Բրիւքսէլի համալսարանում առաջին Յունուարի սկիզբը (1931): Աւելորդ է ասել, որ հայերէն լեզուն եւ պատմութիւնը պիտի աւանդուին ֆրանսերէն լեզուով:

Այն գումարը, որ պ. Վէռներ յատկացրել է հայկական ամբոնին, դեռ բաւական չէ հայագիտութեան ճիւղին, անհրաժեշտ է ունենալ նաեւ հայագիտական մասնագրան: Համալսարանի վարչութիւնն եւ Պրոֆ. Գրէգուար յոյս են տածում թէ կը գտնուին Դաղղիայում եւ Բելգիայում բնակուող ղեկավար հայեր, որոնք ղրամով կամ ղրբերով կը նպաստեն հայկական ճիւղի ապահովութեան: Միեւնոյն ժամանակ նրանք յոյս ունին թէ Բելգիական համալսարաններում սովորող հայ ուսանողներն էլ կ'արձանագրուին հայագիտութեան դասերին եւ իրենց ներկայութեամբ կը քաջալերեն օտար ուսուցիչներին:

ՍԱՐՈՒԽԱՆ

ՄՈՒՐԱՑԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՍԿԻԶԲԸ

Իմ ձեռքի տակ է գտնւում Մուրացանի ինքնաձեռագիր Յիշատակարանը, որ ինձ տրամադրել է հանդուցեալ վիպասանի այրին, տիկին Ոսկի Տէր Յովհաննիսեան:

Յիշատակարանը ամփոփուած է քառածալ եւ տողուած մեծ տետրի մէջ, կիսամաշ կազմով: Իւրաքանչիւր էջ ունի 31 տող, իսկ ամբողջ տետրը՝ 31 թերթ կամ 62 էջ, տողուած: Գրուած են սակայն առաջին $8\frac{3}{4}$ էջերը միայն, իսկ մնացածը պարապ են: Ակներեւ է որ Մուրացան կամեցել է Յիշատակարանի մէջ օր առաջ գրի անցնել իր կեանքի գլխաւոր դէպքերը եւ սակայն չատ չուտով լքել է այդ միտքը, որով եւ Յիշատակարանը կիսատ է մնացել դեռ հազիւ սկսուած: Որքան յիշում եմ, հանդուցեալ վիպասանը չատ ուշ, իր մահուանից մի քանի տարի առաջ, մի ուրիշ եղանակով կատարել է լրացնել թողած գործը եւ «Լումայ» ամսագրում հրատարակել է իր ինքնակենսագրութիւնը: Դժբախտաբար ձեռքիս տակ չկան «Լումայի» հատաքածոները, եւ ես հնարաւորութիւն չունիմ անձամբ վերստուգելու այդ ու, ճշտութեան դէպքում, այս–դէս նշանակելու ամսագրի այն թիւերը, ուր տեղ նշանակելու ամսագրի այն թիւերը, ուր տպագրուած են վիպասանի ինքնակենսագրութիւնը: Թերեւս «Հանդէս»ի խմբագրութիւնը բարի կը լինի եւ մի ծանօթութեան մէջ կը լրացնի այդ թերին:

Այսպէս կամ այնպէս, աւելորդ չհամարեցի Մուրացանի Յիշատակարանի սկիզբը, լինի նա թէկուզ մի բնկոր, «Հանդէս»ի միջոցով սեփականութիւն դարձնել հայոց նոր գրականութեան պատմութեամբ եւ ի մասնաւորի Մուրացանի կեանքով ու գործերով հետաքրքրուող անհատների:

Ձեռագրի վերնագիրն է՝ «Իմ Յիշատակարանը»: Անմիջապէս տակը աւելցած է· «18—85 Յունուար 1· առաւօտեան 1 ժամ 15 րոպէ»:

Այս վերնագիրը գեռեղուած է առանձին, մի անտող երկթերթի առաջին էջի վրայ: Այդ երկթերթի միւս կէսը տետրի վերջում, ինչպէս նաեւ տողուած առաջին թերթի երկրորդ կէսը, գարձեալ տետրի վերջում, կարուած եւ պահուած են: Վերնագրի թերթի (ձերմակ) երկրորդ էջը պարապ է: Այնուհետեւ միայն, ուրեմն տողուած թերթերից առաջին էջից հենց, սկսում է բուն Յիշատակարանը: Վերջինս էջերի թուահամարներ չունի: Միայն թէ «Յիշատակարանի» առաջին չորս էջերը, որ մի տեսակ յատկաբեր են, հաւասարածների են բաժանուած, թուով հինգ:

Առաջ ենք բերում ստորեւ «Յիշատակարան»ը, որ, ինչպէս ասացինք, միայն սկիզբն ունի եւ ակներեւաբար չի էլ չարունակուել յետոյ: Հեղինակի ուղղագրութիւնը պահ–

© National Library of Armenia